ՊԱՏՄԱԿԱՆ

ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱՒՈՐՈՒՄՆԵՐԸ

Մուտք

1045 թուականին Բագրատունեաց երիտասարդ գահակալ Գագիկ Երկրորդ Բագրատունի թագաւորին «պարտադրանքով» հրաւիրել են Բիւզանդական կայսրութեան մայրաքաղաք Կոստանդնուպոլիս, ուխտադրուժ նենգութեամբ զրկել են իշխանութիւնից եւ նա այլեւս չի վերադարձել Հայաստան։ Հայաստանը կորցրել է ե՛ւ թագաւորին, ե՛ւ անկախութիւնը։ Բիւզանդական անհեռատես քաղաքականութիւնը իրականում վերացրել է դէպի իր երկիր տանող պարիսպ-վահանը՝ Հայաստանը։ Նրա անմիտ քաղաքական քայլը Հայաստանը դարձրել է ոտնակոխ սելջուկ, արաբ, քուրդ թափառիկ նըւաճողների, արնախում ցեղերի համար եւ բացել է Բիւզանդիայի ոչնչացման դուռը։

11-րդ դարի ականատես պատմիչ Արիստակէս Լաստիվերտցին արձանագրել է. «... թագաւորը... իբրեւ գերի կալանաւոր նստած է հեռաւոր աշխարհում, այդպէս էլ հայրապետական աթոռը զրկուած աթոռակալից, այրի մնացած նորահարսի պէս դէմքով տխուր է երեւում։ Հեծելազօրը շրջում է անտէր՝ որը Պարսկաստանում, որը Յունաստանում, որը Վրաստանում։ Ազնուականներն ու իշխանաւորները հայրենիքից տեղահան... ամէն մէկը մի տեղ մռնչում է, ինչպէս առիւծների կորիւնները...։ Ո՛չ այգեկութի ուրախութեան ձայներ են լսւում եւ ոչ էլ հնձանում՝ տրորողներին ուղղուած գովեստի խօսքեր...»[1]։

Սա դաժան իրականութիւն էր, մի ամբողջ ազգի ողբերգութիւն։ Հայաստանը, որ տասնամեակներ առաջ տարածաշրջանի ուժեղագոյն թագաւորութիւններից մէկն էր, որի տիրակալներին ենթակայ էին նաեւ Վիրքի ու Աղուանքի թագաւորները, որոնք կրում էին շահնշահ, արքայից արքայ, տիեզերակալ տիտղոսներ [«Ի ՆԾ (1001) թուին... ի մեծափառ թագաւորութեանն Գագկա Հայոց եւ Վրաց շահանշահի...[2]», «... Հաստատուն է գիրս հրամանաւ Գագկա շահնշահի, որդոյ Աշոտոյ արքայից արքայի»[3], «Ի ՆԶԵ (1036) թուականիս... ի մեծափառ թագաւորութեանս հզաւր և տիեզերակալ Սմբատա, որդոյ Գագկա Հայոց եւ Վրաց շահայնշահի...»[4], «... ի չորեքհարիւր քսան և հինգ թուին (975) ... առնու զթագն... Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ»[5]] մնացել էին անցեալում, յայտնուել անորոշ իրականութիւնում։ Պետականութիւնը կորցրած Հայաստանը կամաց-կամաց հայազրկուելու էր։

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՅԱՆԿՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿ

Նման պատմական իրավիճակում, անկախ պետականութեան կայացման գլխաւոր հրամայականը, բնական պատմական տարածքի վրայ տուեալ ժողովուրդի ապրելու հանգամանքն էր։ Բագրատունիների թագաւորութեան անկումից յետոյ ե՛ւ Բիւ-

---

[1] **Արիստակէս Լաստիվերցի**, Պատմութիւն։ Թարգմանութիւնը Վ. Ա. Գէորգեանի, «Հայաստան» հրատարակչութիւն, Երեւան, 1971, էջ 34։

[2] Դիւան հայ վիմագրութեան, պրակ 1, Անի քաղաք։ Կազմեց Հ. Ա. Օրբելի, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1966, էջ 35, արձ. 101։

[3] Նոյն տեղում, էջ 42, արձ. 119։

[4] Նոյն տեղում, էջ 48, արձ. 137։

[5] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 95։

զանդական Հայաստան, ե՛ւ Արեւելեան Հայաստան ներխուժել էին օտար հրոսակներ եւ բնիկ տէրերի թուաքանակի պակասեցմանը զուգահեռ, տէր էին դարձել թուրք, արաբ, քուրդ, սելջուկ օտարականները։ Երկու Հայաստանների գլխին կախուել էր հայ բնակչութիւնից խպառ զրկուելու ողբերգութիւնը։ Իրականում շատ դժուար է, գրեթէ անհնար, օտարի լծի տակ պահպանել էթնիկ պատկանելութիւնը, ծնել ու մեծացնել երեխաներ, բազմանալ։ Այդ տասնամեակներին, հարիւրամեակներին պարբերական կոտորածները իրօք մաշել են հայ ազգը։ Մի քանի օրինակ։ Սելջուկեան երկրորդ արշաւանքի ժամանակ, Հայաստանի անկախութիւնը կորցնելուց ընդամէնը չորս տարի յետոյ, 1049 թուականին, գրաւել են Արծն քաղաքը, հիմնայատակ աւերել են այն, կոտորել 150.000 մարդ[6]։ 1058 թուականին թուրքմենները չեն կարողացել գրաւել Կարսը, Անին, աւերել են Բասենի դաշտի հայկական բնակավայրերը, միայն Օկոմի քաղաքում կոտորել են 30.000 մարդ[7]։ 1062 թուականի Օգոստոսին սելջուկ սուլթան Ալփասլանը պաշարել եւ, հրամանատարների անհամաձայնութեան պատճառով, գրաւել է Անին։ Քաղաքի փողոցները լցուել են դիակներով այնպէս, որ իր զօրքը չի կարողացել շարժուել։ Նա իր հարիւր հազարանոց բանակի հետ հեռացել է տանելով 50.000 հայ գերի[8]։ 1162 թուականին Ելտկուզ աթաբեկը չի կարողացել գրաւել Անին, աւեր ու մահ է սփռել Շիրակի, Արագածոտնի գաւառներում, Մրենի ամրոցում հրկիզել է չորս հազար, Աշնակ գիւղում՝ հինգ հազար մարդ[9]։ 1170 թուականին սելջուկները գրաւել են Սիւնիքի թագաւորութեան վերջին յենակէտը՝ Բաղաբերդը։ Այստեղ էին հաւաքուել թագաւորութեան հայ բնակչները, տեղափոխուել թագաւորութեան հոգեւոր կենտրոնների գանձերը, այդ թւում աւելի քան 10.000 ձեռագիր։ Բերդաքաղաքի բնակչութիւնը գլխովին կոտորուել է, իսկ գանձերը՝ «Ամենայն առ հասարակ գերի վարեցան, եւ ցան ու ցիր եղեն ընդ երեսս աշխարհի»[10]։

Ապագայի չգոյութիւնը, ամէն պահի օտար ոհմակների յարձակումները՝ աւարառութիւնը, սպանութիւնները բերել են ամենասարսափելի իրականութեանը։ Հայաստանի տէրերը իրենց կամքով սկսել են լքել հայրենի երկիրը։ Գնացել են Կապադովկիա, Կիլիկիա, Կոստանդնուպոլիս, այդ ուղղութեամբ աւելի հեռուներ, Պոնտական ծովի ափերով անցել են Ռուսաստան եւ աւելի հեռուներ, Միջագետքի տարածքով շարժուել են Եգիպտոս եւ աւելի հեռուներ։ Գնացել են տոհմերով, ենթակայ բնակչութեամբ, աշխատող մշակներով, շարժական գոյքով։ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը որդիների՝ Դաւիթի, Աբուսահլի, Ատոմի, Կոստանդինի, եղբօրորդիների՝ Դերենիկի, Գագիկի, Աշոտի հետ 1021 թուականին իր երկիրը՝ 4000 գիւղ, 8 քաղաք, 72 բերդ-ամրոց, 115 վանք, տուել է Բիւզանդիայի կայսրին եւ մօտ 70-80 հազար մարդով, այդ թւում 14 հազար տղամարդով, տեղափոխուել կայսրութեան տարածք ստանալով՝ «Սեւաստն ու Լառիսը և շատ պռաստիններ[11]»[12]։ 1065 թուականին Կարսի Աբաս թագաւորի որդի Գագիկ Բագրատունի թագաւորը «թուրքերի կողմից նեղուելով, իր հայրենիքը տալիս է Յունաստանին եւ փոխարէնն ստանում է Ծամնդաւը, Լառիան, Ամասիան, Կոմանան

---

[6] **Մատթէոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, Գրաբար բնագիրը Մամբրէ Մելիք-Ադամեանի եւ Ներսէս Տէր-Միքայէլեանի, Երեւանի համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1991, էջ 112։

[7] Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրութեամբ Կ. Իւզբաշեանի, Երեւան, 1963, էջ 102։

[8] **Մատթէոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, էջ 158-162։

[9] Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, հրատ. Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 138։

[10] **Ստեփանոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 236։

[11] Պռաստիններ՝ արուարձաններ՝ գիւղեր։

[12] **Վարդան Արեւելցի**, Տիեզերական պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ աստղանիշով ծանոթագրութիւնները Գ. Բ. Թօսունեանի, ԵՊՀ հրատարակչութիւն, Երեւան, 2001, էջ 133։

ու հարիւր արուարձան / պռաստին, որոնք գիւղեր են»[13]։

Նկատենք, որ Հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձի, իշխան Վեստ Սարգսի դաւաճանութեան հետեւանքով 1045 թուականին Բիւզանդիան գրաւել է Անի մայրաքաղաքը, որի հետեւանքով «խախտեալ փլաւ տէրութիւն ազգին Բագրատունեաց»[14]։ Երդումով Կոստանդնուպոլիս «հրաւիրուած» Հայոց արքայ Գագիկ Բ-ն այլեւս չի վերադարձել Անի։ Նա իր հայրենիքի դիմաց ստիպուած «առնում է Կալոնպաղատն ու Պիզուն»[15] Կապադովկիայի սահմանի մօտ։

Մուսուլման նուաճողները գրաւելով Հայաստանի տարբեր երկրամասեր, սպանել, սրի ու հրի են մատնել հարիւր հազարաւոր հայերի, ստրկութեան են վաճառել հարիւր հազարների, բայց նաեւ հարիւր հազարաւոր հայերի տեղահանել եւ քշել են սեփական տարածքները՝ աշխատելու։ 1196 թուականին Հայաստանի տարբեր շրջաններից 70.000 հայերի Ղիյաս ադ-դին Քէյ Խոսրովը տեղափոխել է Ակշեհիրի շրջան։ Այստեղ քշուած հայերին բաժանել են հինգհազարական խմբերի, տուել են գիւղեր, տներ, վարուցանքի գործիքներ, սերմացու։ Արտուխեան Կարա Ասլանն այսպէս է մեկնաբանել. «Մենք գաղթեցրած այս մարդկանց չենք ստրկացնելու։ Նրանց տեղաւորելու ենք գիւղերում։ Նրանք ագարակներում կաշխատեն մեզ համար, այսինքն ստեղծուած նիւթական բարիքներով մեզ հարկեր կը վճարեն»[16]։

12-րդ դարի երկրորդ կէսին հայութեան կիսանկախ իշխանական կղզեակներ էին պահպանուել Արեւմտեան Հայաստանի լեռնային որոշ շրջաններում եւ Արեւելեան կամ Հիւսիսային Հայաստանի Լոռու հիւսիսային հատուածում, Տաւուշի սահմանային երկու բերդերում ու դրանց անմիջական յարող գիւղերում՝ վրաց Բագրատունիների աւարառութիւնից փրկուած Նոր Բերդում եւ Մածնաբերդում։ Սեփական անկախ գոյութիւնը պահպանել էին Արցախի ինքնակալ տէրերը։

Անկախութիւնն անքննելի եւ անսակարկելի արժէք է, ինչպիսին էլ այն լինի։ Ոչ կոտորածները, ոչ աւերն ու աւարառութիւնը, ոչ հայաստանեան երկրամասերի հայաթափումը, չեն կարողացել հայութեան մէջ մեռցնել սեփական պետականութիւնը վերականգնելու ցանկութիւնը։ Եւ Հայաստանի անկախ պետականութեան վերականգնումը 12-րդ դարավերջին ազգային նպատակ են դարձրել Արեւելեան Հայաստանի նոր ազնուածինները (էլիտան)։ Հայաստանը նրանց էթնիկ հայրենասիրութեան, էթնիկ ինքնագիտակցութեան վերազարթօնքն էր։

<u>ՆՈՐ ԱԶՆՈՒԱԾԻՆՆԵՐԸ (ԷԼԻՏԱՆ)</u>

140 տարի անկախութիւնը կորցրած Հայաստանի հին ազնուական, իշխանական տոհմերի տէրերը կամ սպանուել էին, կամ հայրենիքից հեռացել տասնամեակներ առաջ, իսկ օտարի ենթակայութեան տակ ծնուած ժառանգներն արդէն քաջութեամբ ու նուիրումով նրանց հետ քիչ կապ ունէին, զիջում էին իրենց պապերին։

Էթնիկական ինքնագիտակցական հայրենասիրութեան ջահը բարձրացնող էր անհրաժեշտ, նոր առաջնորդ, որ միաւորեր, համախմբեր, հաւատքով զօրացներ ու հայութեան պահպանուած բեկորները մէկտեղելով ինքնուրոյնութեան համար կռուելու, յաղթելու եւ ապրելու հաւատ ներշնչեր։

Ժամանակը ծնել է այդ առաջնորդին։ Հայոց հին արգանդը աշխարհին պարգեւեց

---

[13] Նոյն տեղում, էջ 145։

[14] **Մատթէոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, էջ 108։

[15] **Վարդան Արեւելցի**, Տիեզերական պատմութիւն, էջ 133։

[16] Հայ ժողովրդի պատմութիւն։ Հատ. 3, ՀԽՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 1976, էջ 502-503; Տե՛ս Turan O., Les souverians Seldjoukides et leups sujets non musulmans, Studio Islamica,I, p. 88-89.

Զաքարեանների ընտանիքը եւ առաջնորդ Զաքարէ Բ շահնշահին, արքային, կեսարին, ինքնակալին, տիեզերակալին, որ եկաւ ու հայութեան բեկորները հաւաքելով ստեղծեց գաղափարական-փիլիսոփայական յենարան Հայոց անկախութեան վերականգնման համար։

Նրա կողքին կանգնել են իր մարտակից զօրավարները՝ ազնուական-իշխանական ծագում չունեցող Վահրամեանների[17], Վաչուտեանների[18], Օրբելեանների[19], Թմոգվեցիների[20], Հոնենցների[21] ինչպէս նաեւ հին իշխանական տոհմերի՝ Խաղբակեան-Պռոշեանների[22], Արծրունիների[23], Պահլաւունիների[24] շառաւիղների, Խաչէնի թագաւորական տների՝ Վերին եւ Ներքին Խաչէնների, Ծարի[25] ներկայացուցիչները։

*Պատմիչ Վարդան Արեւելցին իր ժամանակագրութեան մէջ գրել է առաջին յիշատակելի Զաքարեանի մասին. «Ի վեցհարիւր և տասն թուին (1161) էառ Գէորգի Վրաց թագաւորն զԱնի ի Փատլուն ամիրայէն... և թողոյր ի յԱնի զՍադուն իշխանն, յորոյ վերայ կարծիք ապստամբութեան եղեն՝ վասն խնամով ամրացուցանելն զպարիսպ քաղաքին, զոր իմացեալ թագաւորն ընկենու զնա ի պատուոյ... և զիշխանն **Զաքարեան զՍարգիս** դնեն ի տեղի նորա ի յԱնի»[26]։*

1161 թուականին Անիի կառավարիչ նշանակուած զօրավար Սարգիս Զաքարեանի պապերը սերել են Վանայ լճից հարաւ գտնուող Կորճայքի գաւառից, որտեղ տիրել են Սմբատաբերդ, Ալկեքար, Աշոտաբերդ, Տմորիս բերդերին։ Հէնց այդ տոհմից Իվանէ Ա զօրավարը յետագայում յայտնել է, որ սերել են Բագրատունի տոհմից[27]։ Արծրունիների Վասպուրականի թագաւորութեան թուլացումը, թագաւորութեան վերացումը երկրամասի հարաւային կողմում դուռ է բացել քրդերի ներհոսքի համար։ Նրանք մորեխի նման լցուել են Կորճայք։ Ոչ միայն մորեխի նման անհաշիւ ոչխարի հօտերով են եկել, այլ մորեխի հանգոյն սկսել են բազմանալ։ Շատ կարճ ժամանակում, 15-20 տարում, այդ հողերի օրինական տէրերը, դարձել են այնպիսի փոքրամասնութիւն, որ անգամ շնչելու օդ չեն ունեցել։ Սրան գումարած քրդերի համատարած լկտի ընչաքաղցութիւնը՝ գողութիւնը, թալանով ապրելու կենսակերպը, կանանց, աղջիկների առեւանգումը լցրել են հայերի համբերութեան բաժակը։ Աւագները որոշել են թողնել հայրենի եր-

---

[17] **Շահնազարեան Ա. Ի.**, Վահրամեանների իշխանութիւնը, Երեւան, 1990։

[18] **Պետրոսեանց Տ.**, Վաչուտեաններ, Երեւան, 2001, 363 էջ։

[19] **Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի** պատմութիւն տանն Սիսական, Ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկուայ, 1861։ **Գրիգորեան Գ.**, Սիւնիքը Օրբելեանների օրոք, 13–15-րդ դարեր, Երեւան, 1981։

[20] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, էջ 163։

[21] Դիւան հայ վիմագրութեան, պրակ 1, էջ 62, արձ. 188, էջ 69, արձ. 211։

[22] **Յովսէփեան Գարեգին**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 78։ **Եղիազարեան Յովսէփ**, Կեչառիսի վանքը եւ նրա վիմագիր արձանագրութիւնները, «Էջմիածին» ամսագիր, 1955, թիւ 12, էջ 46, արձ. 38։ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, էջ 205։

[23] Պատմութիւն Արծրունեաց տան / Թովմա Արծրունի եւ Անանուն, Թարգմ. եւ ծանօթագր.՝ Վ. Մ. Վարդանեան, Խմբ. կազմ՝ Ա. Ա. Աբրահամեան եւ ուրիշ., Խմբ.՝ Ռ. Գ. Սարգսեան, Երեւան, Սովետական գրող, 1978, 406 էջ։

[24] **Վարդանեան Վ.**, Պահլաւունիներ. Հայոց պետականութեան եւ հոգեւոր անաղարտութեան պահապանները։ Երեւան, 2008։

[25] **Ուլուբաբեան Բ. Ա.**, Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում, Երեւան, 1975։

[26] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 130։

[27] 1213 թուականին Իվանէ զօրավարը Հաղարծնի գաւթի, արեւմտեան դռան բարաւորից վեր, արտաքուստ փորագրել է տուել. «Կամաւ ամենակալին Ա(ստուծո)յ, այս մեր գիր յիշատակի է եւ արձան մշտընջենաւոր, **որդեաց մեծին Սարգսի, յազգէ Բագրատունեան՝ Իւանէի եւ Զաքարէի**, յորժամ նախախնամութիւնն Ա(ստուծո)յ էհաս յարարածս եւ ետ առին տիրել սէփական ժառանգութեանն նախնեաց մերոց...» (Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պրակ 6, Իջեւանի շրջան, կազմեցին Ս. Ա. Աւագեանը, Հռ. Մ. Ջանփոլատեանը, Երեւան, 1977, էջ 22)։

կիրը, բերդերը, գաղթել այդ երկրամասից, որ հայկական Կորճայք անուան փոխարէն արդէն քրդական Բաբիրական խել (շրջան)[28] անունն էր ստացել, քանի որ քրդական հորդաներն այդ կողմերից էին եկել եւ իրենց սովորոյթով առաջին հերթին տարածքի պատմական անունն էին վերացրել, իրենցով արել, այսինքն Կորճայքին Բաբիրական (Բաբելոնի) խել էին կոչել։ Կորճայքից մի ամբողջ տոհմ, շուրջ չորս հազար ձիաւոր զինուորներով պաշտպանուած, հինգ հազարից աւելի երեխաների, կանանց, աղջիկների, տատիկ-պապիկների քարաւանով, ոչխարների, կովերի հօտերով, ձիերի, ջորիների երամակներով, սայլերին բարձած ունեցուածքով՝ բռնել են Տաւուշ աշխարհի ճանապարհը, որի տէր Կիւրիկեան-Բագրատունիները իրենց մօտ ուղարկուած սուրհանդակներին համաձայնութիւն էին տուել, որ կ՚ընդունեն իրենց հայրենակիցներին։ Քարաւանը Վանի հարաւակողմով մտել է Պարսկաստանի սահմանը, Սիւնիքի հատուածում անցել Արաքսը, Արագածի ստորոտով, Նիգ գաւառի տարածքով բարձրացել Տաւշոյ աշխարհ։ Բարեկամները եկուոր ազգականներին ապրելու համար տուել են Խոժոռնի բերդը շրջակայ գիւղերով։ Տեղաբնիկ Բագրատունի-Կիւրիկեան թագաւորները երկու խնդիր են լուծել։ Առաջինը օգնել են ազգակիցներին, տեղ են տուել նրանց։ Երկրորդը, ընդունելով եկուոր հայրենակիցներին իրենց մեծաքանակ ազգուտոհմով, ծառաներով, կենդանիների հօտերով, սեփական հայաթափուած տարածքում ստուարացրել են հայութեան թիւը։ Այդ քայլը թէ՛ ռազմական առումով էր ձեռնտու, թէ՛ տնտեսական։ Մեծացել է երկրամասի պաշտպանական կարողութիւնը։

Եկուոր հայրենակիցները կարգի են բերել ռազմական կարողութիւնները, տեղացիներով համալրել-ձեւաւորել են մօտ տաս հազարանոց զօրամիաւորում (հեծելազօր, հետեւազօր)։ Սեփական բանակը ղեկավարելու համար, տոհմի աւագանին ընտրել է Զաքարէ (Ա) անունով իշխանին։ Այդ պահից սկսած երկրամասում ուժային կենտրոնը թեքուել է Խոժոռնիի նոր տէր Զաքարէ (Ա)-ի կողմը, քանզի ոչ հիւրնկալող Բագրատունի-Կիւրիկեանները, ոչ այդ կողմում՝ Մահկանաբերդում եւ Կայենում հաստատուած Արծրունիները, ոչ միւս հայկական հին իշխանական տները նման ռազմական կարողութիւն չունէին։ Զաքարէ Ա-ին բանակի հրամանատարի պաշտօնում յաջորդել է որդին՝ Սարգիս (Մեծ)-ը՝ Վարդան Արեւելցի պատմիչի յիշատակած Սարգիս Զաքարեանը։ Այս Սարգիս (Մեծ)-ը առաւել է ամրապնդել, մեծացրել իր զինական կարողութիւնները։ Նա նաեւ, ինչպէս հայրը, շարունակել է հայկական առանձին-առանձին զինուած ուժերը միաւորելու գործը։ Նրա օրօք բանակը կարող էր արդէն միաւորել 15-20 հազար զինուոր։ Սա հզօր ուժ էր։ Այդ ուժն առանձնայատուկ անհրաժեշտ էր նաեւ վրաց տիրակալներին։ Հէնց միայն այն, որ Վիրքի տէրերը սեփական բանակ չունէին եւ հիմնականում օգտւում էին ղպչաղ կամ ալան վարձկանների ծառայութիւններից, Հայոց մեծաքանակ, լաւ զինուած, մասնագիտական զօրամասերով կազմաւորուած զօրաբանակի ղեկավարին իրենց կողմը գրաւելը, նրա ռազմական ուժերն իրենց նպատակներին ծառայեցնելը շատ ձեռնտու էր։ Սարգիս (Մեծ) զօրավարը այնքան հզօր էր, որ թէ՛ Խոժոռնիում, թէ՛ վրաց արքունիքում նրան, նրա որդիներին ճանաչել, անուանել են Զաքարէի տուն, Զաքարեանց-Զաքարեաններ։

Վրաց տիրակալներն անխնայ օգտագործել են Հայոց զինուժը, իսկ պատերազմներից ստացած աւարը տնօրինել են ինքնուրոյն։ Դաւիթ Դ Շինարար[29] թագաւորը վը-

---

[28] Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրել է. «Յաւուրս ժամանակաց թագաւորութեանն Լեոնի հայոց արքայի էին յԱրևելս երկու եղբայրք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարիայի, **որ հատուածեալ ի քրդաց ի Բաբիրական խելէն...**» (Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1961, էջ 162)։

[29] Դաւիթ Դ Շինարար, Վրաստանի եւ Հայաստանի թագաւոր 1089-1125 թուականներին։ Սա առաջին թագաւորն էր, որ իր արքայացանկի մէջ աւելացրեց նաեւ Հայաստանի արքայ տիտղոսը։

բաց առաջին հայազգի տիրակալն էր, որ իրեն յայտարարել է նաեւ Հայոց արքայ։ Նոյն կերպ են իրենց կոչել Դեմետրէ Ա[30], Դաւիթ Ե[31], Գէորգի Գ[32] արքաները։ Նրանց դէպի հարաւ, արեւելք կամ արեւմուտք իրականացրած յարձակումները կատարուել են հայկական տարածքների ուղղութեամբ։ Ղփչաղներից, ալաններից կազմուած վարձկան բանակի կազմում գտնուող Հայոց բանակը եւս մասնակցել է հայկական տարածքների՝ բերդերի, քաղաքների, գիւղերի աւերմանը, տեղի հայ բնակչութեանը մասսայաբար Վրաստանի խորքերը քշելու գործողութիւններին։ Վրաց տիրակալներն այդ արել են իրենց տնտեսութիւնը զարգացնելու համար։ Այդ ամէնը սկզբից ինչ-որ տեղ բաւարարել է հայ զօրականներին, որովհետեւ տուել է իրենց բաժին օգուտը։ Կամաց-կամաց հայ զօրականները, էթնիկ ինքնագիտակցութեան արթնացմամբ, բացասաբար են նայել ստեղծուած իրավիճակին։ Նրանք ցաւ են ապրել, որ ազատագրած հայկական պատմական տարածքները վրաց տիրակալները կամայականօրէն յանձնել են այս կամ այն վրացուն։ Դժգոհութիւնը խմորուել է եւ խմորումը օրինական է եղել։ Վրաց տիրող վերնախաւը, որքան էլ մատների արանքով է նայել ստեղծուած իրավիճակին, այնու ամենայնիւ նայել եւ հասկացել է, որ իրական ուժ տարածաշրջանում միայն հայերն ունեն՝ իրենց 20-25 հազարանոց բանակով եւ որ իրենք ուզեն թէ չուզեն պարտաւոր են հաշուի նստել դրա հետ։

Գէորգի թագաւորը մահից առաջ թագը յանձնել է աղջկան՝ Թամարին։

Գէորգի թագաւորը, ինչպէս իր նախորդները, հիմնականում յենուել է զպչաղ երեւելիների, նրանց զինուժի վրայ, ինչը շատ թանկ է դարձել յետագայ պահանջների առումով։

Հաշուի առնելով այդ հանգամանքը՝ հօրը փոխարինած Թամար թագուհին սկսել է անվերապահօրէն յենուել Հայոց զինուժի վրայ։ Սրանում մեծ դեր է ունեցել հայկական ազնուական դասի ներգրաւուածութիւնը վրաց պետական պաշտօնական համակարգում։ Բնատուր շնորհի արդիւնքում հայերը հասցրել էին տեղ գրաւել թէ՛ տնտեսական, թէ՛ պետական, թէ՛ ռազմական ասպարէզներում։ Թամարին ոչինչ չէր մնում անել, քան ստեղծուած իրավիճակին իրաւական ձեւակերպում տալ։

1185 թուականին նա փաստացի ճանաչել է Հայաստանի անկախացումը։ Այդպէս Վիրքին աւելի ձեռնտու էր։ Անկախ Հայաստանն իր բանակով պաշտպանելով իրեն, փաստացի յուսալիօրէն կը պաշտպաներ Վիրքի հարաւը։ Միաժամանակ անկախութիւն շնորհելով Հայաստանին Թամար թագուհու Վիրքը համահաւասարի իրաւունքով անկախ Հայաստանի հետ ձեւաւորեց երկու անկախ պետութիւնների անվտանգութեան միասնական համակարգ՝ միասնական պետական խորհրդով, պաշտօնէութեամբ։

Փաստօրէն գահակալելու առաջին տարում, 1185 թուականին, Թամար թագուհին Սարգիս Բ Մեծին է յանձնել հայ-վրացական միացեալ պետութեան պաշտպանութեան նախարար-բանակի ընդհանուր հրամանատարին տրուող կալուածը՝ Լոռի-Տաշիրը։ Երկրամասին շնորհել է «**սամթաւրոյ**» (ինքնուրոյնացած) կարգավիճակ, իսկ իրեն՝ Սարգիս Բ Մեծին՝ «**մթաւար**» (թագաւոր) կարգավիճակ։

Հայաստանին անկախութիւնը շնորհուել է միջազգային-իրաւական ձեւաչափով[33]։

---

[30] Դեմետրէ Ա, Վրաստանի եւ Հայաստանի թագաւոր 1125-1154, 1155-1156 թուականներին։

[31] Դաւիթ Ե, Վրաստանի եւ Հայաստանի թագաւոր 1154-1155 թուականներին։ Միայն այս թագաւորի օրոք Հայաստանի ուղղութեամբ յարձակումներ չեն եղել։ Նա անգամ նպատակադրել է պապի՝ Դաւիթ Դ թագաւորի կողմից գրաւուած Լոռու թագաւորութեան հողերը վերադարձնել Կիւրիկէ թագաւորին, որի պատճառով թունաւորուել ու սպանուել է։

[32] Գէորգի Գ, Վրաստանի եւ Հայաստանի թագաւոր 1156-1184 թուականներին։

[33] **Թորոսեան Խ.**, «Թագաւորների պատմութիւնն ու գովաբանութիւնը» որպէս Զաքարեան Հայաստանի պատ-

Սարգիս Բ Մեծի գործը լաւագոյնս շարունակել է աւագ որդին՝ Զաքարէ Բ թագաւորը (1193 թուականից շահնշահ)։ Նա Լոռու փոքրիկ տարածքի վրայ ձեւական անկախութիւն ստացած Լոռի-Հայաստանը, իր կառավարման 25 տարիներին, վերածել է բացարձակ անկախ, ուժեղ, հարուստ, մշակութապէս զարգացած Հայք-Հայաստան պետութեան, որը դարձել է Մերձաւոր Արեւելքի ռազմաքաղաքական լրջագոյն դերակատարներից մէկը։

<u>ԲԱՆԱԿԸ</u>

Զաքարէ Բ շահնշահը իշխանութեան առաջին օրուանից իր հիմնական գործն է դարձրել Հայոց բանակի հզօրացումը։ Մէկ-երկու տարուայ ընթացքում նա կազմակերպել է 50 հազարանոց պետական հեծեալ բանակ՝ բոլոր զօրատեսակներով, սպառազինութեամբ, պետական ապահովմամբ։

Զաքարէ Բ շահնշահը աւերակների վրայ միասնական պետութիւն է կերտել՝ վերաազատագրելով ամբողջ Բագրատունեաց Հայաստանը. «Կամաւ ամենակալին Ա(ստուծո)յ... ետ առին ... սեփական ժառանգութեանն նախնեաց... յառաջ զանառիկ դղեակն Անբերդ, եւ զթագաւորանիստ քաղաքն Անի, ապա զամուրն Բջնի, զՄարանդ, միչք եւ Գաւազանք, ի Թաւրէժ, զկարնոյ քաղաք մինչեւ Խլաթ, զՇաքի եւ զՇրուան, Պարտաւ, մինչեւ Բելական եւ զայլ բազումս իւրեանց սահմանաւք...»[34]։ Հայաստանի պետական սահմանը սկսուել է Կասպից ծովից, անցել Գագ-Զորակերտ-Զաւախք-Արդահան-Փանասկերտ գծով ու հասել Սպեր։ Զաքարէ Բ-ի Հայաստանը ոչ մտել է Վիրքի կազմը, ոչ եղել է նրա մաս, ոչ եղել է հարկատու։ Եղել է բացարձակ անկախ թագաւորութիւն։ Նա յետնորդներին աւանդել է հզօր, բարեկարգ, պետական մտածողութեամբ ժողովուրդ։ Քսանվեց տարի նա առաջնորդել է Հայոց բանակը, տարել է հարիւրից աւելի մեծ, փոքր յաղթանակ, անգամ մահից ամիսներ առաջ Հայոց բանակով հասել է մինչեւ Պարսկաստանի Ռէյ (ներկայ Թեհրան) քաղաքը։ Պատերազմել ու յաղթել է Մերձաւոր Արեւելքի Հայաստանին հարեւան, երբեմնի հզօր բոլոր պետութիւններին, հարկատու է դարձրել Կասպից ծովից մինչեւ Արցախ տարածքի վրայ եղած ամիրայութիւններին, Կարինի ամիրայն։ Ոչինչ չի խնայել երկրի պաշտպանունակութիւնը բարձրացնելու համար։ Անիում անձամբ կառուցել է պարսպի ամենամեծ բուրգը, պարսպի հատուածը։ Նրա կոչով բարձր բուրգեր են կառուցել նաեւ Անիի թէ՛ հարուստ, ունեւոր մարդիկ, թէ՛ սովորական քաղաքացիները։ Այդպէս էր նաեւ ամբողջ Հայաստանում։ Հրամայել էր Հայաստանի բոլոր կողմերում անառիկ բերդեր կառուցել, ամրացնել հին բերդերն ու ամրոցները։ Նրա տիրակալութեան տարիներին հարիւրից աւելի բերդեր ամրացուել ու անառիկ են դարձուել։ Վճռական, դաժան էր ուրացողների, դաւադիրների, դաւաճանների հանդէպ, բայց բարի, հոգատար էր զինուորի, գիւղացու հանդէպ։ Նա հայ եկեղեցու մեծ պաշտպանն էր, Հայոց հաւատքի պաշտպան։ Մանր հարցերում կարող էր զիջել, բայց հաւատի անկիւնաքարային հարցերում երբեք չի տատանուել։ Երկրի երեք հազարից աւելի գիւղերում վերականգնուել, գործել են եկեղեցիներ, կառուցուել են հարիւրից աւելի դարի ոգուն համապատասխան եկեղեցիներ (Հառիճավանք, Ախ-

---

մութեան սկզբնաղբիւր, Երեւան, 1992, էջ 371-372։

[34] Դիւան հայ վիմագրութեան, պրակ 6, էջ 22։ 1862 թ-ին Վենետիկում տպագրուած **Վարդան Վարդապետի** «Հաւաքումն պատմութեան...» գրքում կարդում ենք. «... և իմեանք քաջութեամբ իւրեանց (Զաքարէ Բ-ն եւ Իվանէ Ա-ն – **Տ. Պ.**) թափեցին ի Թուրքաց յոլով բերդս և գաւառս ի սուղ ժամանակի. քանզի ի վեցհարիւր քառասուն թուին (1191) առին երկիրն Շիրակայ, և ի վեցհարիւր քառասուն և հինգ թուին (1196) առին զԱնբերդ, և ի վեցհարիւր քառասուն և ութ թուին (1199) առին զԱնի, և ի վեցհարիւր յիսուն թուին (1201)առին զԲջնի, և ի վեցհարիւր յիսուն և երկու թուին (1203) առին զԴուին, և վեցհարիւր յիսուն և հինգ (1206)թուին առին զԿարս՝ թագաւորին, և ապա զԳետաբակս և զՁարեմն։ Եւ ել անուն նոցա ընդ ամենայն երկիր»։ Գրեթէ նոյնական տեղեկատուութիւն են հաղորդում **Կիրակոս Գանձակեցին** (Պատմութիւն Հայոց, էջ 163), **Ստեփանոս Օրբելեանը** (Պատմութիւն նահանգին Սիսական, Երեւան, 1952, էջ 391-392)։

թալա, Նոր Գետիկ, Յովհաննավանք, Գեղարդ, Սաղմոսավանք, Տեղեր, Նորավանք, Դադիվանք), երկու հարիւրի չափ նոր, հոյաշէն գաւիթներ։ Այդ գործերը ժողովրդի մօտ ձեւաւորել են իր պաշտպանի, հաւատաւոր տիրակալի կերպար։

ՄԻԱՄՆՈՒԹԻՒՆԸ

Հայոց պատմութեան հազարաւոր տարիների որեւէ փուլում հնարաւոր չէ գտնել որեւէ թագաւորի, կառավարչի, զօրավարի, հոգեւոր գործչի, որին յաջողուել է իր կառավարման ժամանակում ապահովել ազգային բացառիկ միասնականութիւն ու, որի կառավարման տարիներին, չեն եղել կենտրոնախոյս շարժումներ, դաւաճանութիւն, այլ եղել է բացառիկ միաբանութիւն։

Այդպիսի միակ տիրակալը եղել է Զաքարէ Բ շահնշահը։ 1185 թուականին Թամար թագուհին Լոռի-Հայաստանին անկախութիւն է շնորհել եւ Սարգիս Բ-ին ճանաչել այդ երկրի թագաւոր, ինչպէս նաեւ նրան տուել միացեալ պետութեան գլխաւոր հրամանատար-ամիրսպասալար-սպարապետի ոսկէ մական։ Եւ նոյն թուականին 22-ամեայ Զաքարէ (Բ)-ն, հօր՝ Սարգիս Բ-ի հրամանով, դարձել է հայ-վրացական միացեալ բանակի կազմում գործող հայկական զօրքերի հրամանատար-ամիրսպասալար։ Ընդամէնը երկու տարի անց, Սարգիս Բ-ի մահից յետոյ, Զաքարէ (Բ)-ն նստել է Հայոց գահին նախ մինչեւ 1193 թուականը թագաւոր, ապա՝ 1193 թուականից շահնշահ, իսկ 1195 թուականին թագադրուել է։

1191 թուականին[35] Զաքարէ Բ շահնշահը, 26 տարեկանում դարձել է Հայաստանի եւ Վիրքի միացեալ պետութեան պետական խորհրդի՝ «դարբազի»-ի անդամ, միացեալ պետութեան պաշտպանութեան նախարար, միացեալ զօրքերի գլխաւոր հրամանատար-ամիրսպասալար (սպարապետ), միացեալ պետութեան մանդատուրթուխուցես (կնքապահ նախարար), միացեալ պետութեան երկրորդ դէմք։

Նա կարողացել է Հայք-Հայաստան երկրում հաստատել բացարձակ հանդուրժողականութեան, համագործակցութեան, համերաշխութեան մթնոլորտ։

Զաքարէ Բ շահնշահը Հայք-Հայաստանի բանակի գլուխ անցած, մինչեւ իր մահը՝ 1213 թուականը, Հայք-Հայաստանին հարեւան, Մերձաւոր Արեւելքի բոլոր աւելի հզօր պետութիւնների դէմ պատերազմել եւ յաղթել է։ Ամբողջ 26 տարի Զաքարէ Բ-ի կողքին եղել ու նրան օգնել է կրտսեր եղբայրը՝ Իվանէ Ա-ն։ Այդպիսի եղբայրութեան օրինակը եւս մեր պատմութիւնն այլեւս չի արձանագրել։ Այս եղբայրութիւնը չի խախտուել անգամ այն դէպքում, երբ Իվանէ Ա Զաքարեանը հաւատափոխ է եղել եւ ընդունել քաղկեդոնականութիւն։ Եղբայրութեան, արիւնակցութեան իսկական փորձութիւն է եղել նաեւ այն փաստը, երբ Խլաթի մօտ, անզգուշութեան պատճառով Իվանէ Ա-ն գերի է ընկել Խլաթի ամիրայի ձեռքը եւ Զաքարէ Ա շահնշահը եղբօրն ազատելու համար վերացրել է Խլաթի պաշարումը, վերադարձրել է Վանի ամբողջ արեւելեան հատուածում ազատագրած տարածքները, վճարել է 10 հազար ոսկի, եղբօր դստերը՝ Թամթային կնութեան է տուել Խլաթի ամիրայի որդուն[36]։ Բայց ամենադաժանը, որ պատահել է, այն էր, որ Զաքարէ Բ շահնշահը հրաժարուել է պատմական Հայաստանի հողերի ազատագրման գաղափարից։

ՀԱՒԱՏՔԻ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ

Զաքարէ Բ շահնշահը հայ-վրացական յարաբերութիւնները կառուցել է բացարձակ հանդուրժողական քաղաքական հիմքի վրայ, ինչը դժուար է ասել Վիրքի աւա-

[35] **Շահինեան Ա.**, Կոշի կոթողը եւ նրա արձանագրութիւնը, Պատմա-բանասիրական հանդէս, 1968, թիւ 2, էջ 200։

[36] **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմութիւն, էջ 165-166։

գանու, հոգեւորականութեան մասին։ Վիրքի հոգեւոր դասի յարձակողական քաղաքականութեան պատճառով լուրջ դժգոհութիւններ են արձանագրուել։

Պատմիչները երկու ծայրայեղ հակասական դէպքի մասին են յիշատակել, որոնք տեղի են ունեցել ամենայն հաւանականութեամբ 1193 թուականից առաջ[37]։ Առաջինը կապուել է Զատիկի օրը մէկ շաբաթուայ տարբերութեամբ նշելու հանգամանքի հետ։ Տեղական մակարդակի վէճերը արդիւնաւէտ չեն եղել։ Զաքարէ Բ շահնշահը եւ Թամար թագուհին մէկական իշխան են ուղարկել Երուսաղէմ՝ խնդրի հետ կապուած ճըշտումների համար։

Երուսաղէմից Տփղիս վերադարձած հայ եւ վրացի իշխանները տիրակալներին պատմել են հետեւեալը, որ իրենք Երուսաղէմում դիմել են հոգեւոր ղեկավարների, ներկայացրել Տիրոջ քաղաք գալու նպատակը։ Նկատի ունենալով, որ ըստ աւանդոյթի, Տիրոջ գերեզմանի վրայ եղած կանթեղը Զատկի օրն ինքնուրոյն, առանց մարդու օգնութեան պիտի վառուի, Երուսաղէմ քաղաքի արաբ կառավարիչը յուշել է հետեւել, թէ որ հաւատի դէպքում, Զատիկի օրը, կանթեղի կրակն ինքնուրոյն կը վառուի։ Քաղկեդոնականների սպասումները չեն արդարացել, կանթեղի կրակը չի վառուել։ Սպասել են ուղիղ եօթ օր։ Հայերի կողմից Զատիկը նշելու օրը կանթեղն ինքնուրոյն վառուել է։ Քաղաքի արաբ կառավարչի հրամանով ամբողջ երկրի բոլոր եկեղեցիներում արաբները յունադաւաններին ծեծել են՝ որպէս հերձուածողների[38]։

Իշխանների պատմութիւնը որքան ճանաչողական ու հաւաստի է, միեւնոյնն է, կողմերի գործողութիւններում ոչինչ չի փոխել։

Պատմում են, որ իբրեւ թէ Երուսաղէմ ուղարկուած իշխանների բացատրութիւնից որոշ ժամանակ անց, կիրակնօրեայ պատարագից յետոյ, հաղորդութեան նշխար ստանալու համար մօտեցած Զաքարէ թագաւորին վրաց քահանան նշխար չի տուել, միայն այն պատճառով, որ նա հայ է, քահանայի յայտարարութեամբ նզովեալներից։ Եւ իբրեւ թէ Վիրքի Յովնան կաթողիկոսն այդ նոյն առիթով ասել է. «Ուղղափառներից ոչ ոք թոյլ չի տայ իրեն քահանայագործութեան ժամանակ կամաւորաբար նշխար տալ ձեզ՝ եօթիցս նզովեալ հայերիդ, թէ գտնուի էլ փախցնող շուն է»[39]։ Այս նուաստացնող արտայայտութիւններից յետոյ, իբրեւ թէ կաթողիկոսն ուզել է բանավիճել Զաքարէ Բ շահնշահի հետ։ Սակայն վերջինս ասել է, որ ինքը եկեղեցու տեսաբան չէ, չի կարող վիճել այդ թեմայով։ Նրա հրաւէրով եկել են Հիւսիսային Հայաստանի նշանաւոր եպիսկոպոսները, վարդապետները Աղուանքի[40] ծերունազարդ կաթողիկոս Ստեփանոսի գլխաւորութեամբ, որոնք բանավիճել են Վիրքի կաթողիկոսի հետ[41]։

---

[37] 1195 թուականին Իվանէ Ա զօրավարը հիմնադրել է Թեժառոյքի քաղկեդոնական եկեղեցին։ Նշանակում է նա դրանից առաջ պիտի քաղկեդոնական դարձած լիներ։

[38] Դէպքի մասին հաղորդել է պատմիչ **Կիրակոս Գանձակեցին** (տե՛ս Հայոց պատմութիւն, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Վարագ Առաքելեանի, «Սովետական գրող» հրատարակչութիւն, Երեւան, 1982, էջ 155-156)։

[39] Դէպքի մասին պատմել է Թամար թագուհու պատմիչը (տե՛ս **Թորոսեան Խոսրով**, «Թագակիրների պատմութիւնն ու գովաբանութիւնը» որպէս Զաքարեան Հայաստանի ու Զաքարեանների պատմութեան սկզբնաղբիւր։ Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի հրատարակչութիւն, Երեւան, 1992, էջ 420-429)։ Այս տեսարանի հիմքն ամբողջովին առնուած է Թամար թագուհու պատմիչից։ Մենք խիստ կասկածով ենք վերաբերում պատմիչի այն տեղեկութեանը, որ վրաց բահանան Զաքարէ թագաւորին նզովեալներից է անուանել եւ նըւազագոյնը կենդանի է մնացել։ Այդ ամբողջ հատուածը մեր խորին համոզմամբ վրացական անբարտաւանութեան յետագայ շրջանի «հիւսուածք» է։

[40] Վրացի պատմիչը սխալմամբ Աղուանքի փոխարէն Աղթամարի կաթողիկոս է գրել, որ անհնար է, քանի որ Աղթամարի կաթողիկոսն այդ ժամանակ բանադրանքի տակ էր։

[41] Նման մի ժողով իր ժամանակ գումարել է նաեւ Դաւիթ Դ թագաւորը (Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, Հ. Ա., Երեւան, 1934, էջ 219-220)։

Հայերն իրենց հաւատի մասին խօսել են պերճութեամբ ու երկարաբանօրէն, որովհետեւ շատ լաւ պատրաստուած էին։ Վիրքի կաթողիկոսն իբրեւ թէ հերքել է հայերի ասածները, սակայն հայերն իրենցն են պնդել։

*Վիրքի Յովհան կաթողիկոսը բանավէճի հնարաւորութիւնները սպառել է։ Իսկ այդ արդէն հաստատում է, որ հայերը ե՛ւ ճիշտ էին, ե՛ւ բանավէճում յաղթող։ Ի վերջոյ, Յովհան կաթողիկոսը դիմել է հակադաւանական քայլի՝ շների միջոցով որոշել հայ կամ վրաց դաւանանքների ճշմարտացիութիւնը։ Հայերը հրաժարուել են նման հակաքրիստոնէական քայլից, իսկ երբ վրաց կաթողիկոսը պնդել է՝ ասել են «դո՛ւ արա»։ Եւ, հակառակ հայկական կողմի ընդդիմութեանը, Վիրքի կաթողիկոսի առաջարկով, երկու կողմերը մէկական շուն են փոխանակել, որպէսզի երեք օր սոված պահելուց յետոյ նրանց առաջ նշխար դնեն, պայմանով, որ սոված մնացած օրերից յետոյ ո՞ր կողմի շունը հրաժարուի նշխարն ուտել, ապա այդ կողմի հաւատն էլ աւելի գերադասելի լինի։ Երեք օր յետոյ հայերի մօտ գտնուած վրացական շունը չի մօտեցել նշխարին, իսկ վրացիների մօտ գտնուած հայերի շունը կերել է նշխարը։ Սրանով էլ վրացիները գոհունակօրէն յայտարարել են, որ իրենց դաւանանքն աւելի լաւն է։ Վրաց պատմիչը գրել է, որ Զաքարէ Բ շահնշահի վրանում եղբայրը՝ Իվանէ Ա զօրավարը եղբօրն ասել է. «Եղբա՛յր, ես չկամեցայ այս վէճին մասնակցել, քանզի վրացիք ճշմարիտ հաւատքի տէր են, ի՞նչ է խանգարում մեզ, որ ընդունենք այդ ճշմարիտ հաւատը, մկրտուենք վրացիների կաթողիկոսից»։ Զաքարէ Բ շահնշահը պատասխանել է եղբօրը. «**Ես չեմ միանայ վրացիներին: Վերջին դատաստանի օրը ում կը հարցնեն, թող նա էլ պատասխան տայ**»։ Իվանէ Ա զօրավարը ընդունել է քաղկեդոնութիւն եւ քաղկեդոնական կարգով մկրտուել է[42]։*

Վերոյիշեալ դէպքերն անուղղակիօրէն փաստում են, որ լուրջ դաւանաբանական խնդիրներ են եղել հայ-վրացական յարաբերութիւններում։

Յայտնի է, որ Հայոց եկեղեցին իր բազմադարեայ ընթացքին երբեւէ իր դաւանանքը չի պարտադրել որեւէ այլ ազգի։ Մինչդեռ նոյնը չես ասի յունադաւանութեան մասին։ Քաղկեդոնի ժողովից սկսած, երբ հայ հոգեւոր հայրերը ընդունել են միաբնակութեան սկզբունքը, յունադաւան եկեղեցին անհանդուրժողականութեան արշաւ է ծաւալել Հայոց եկեղեցու դէմ։ Այդ արել են թէ՛ խաղաղ, թէ՛ ագրեսիւ գործողութիւններով, թէ՛ զէնքի ուժով՝ պատերազմի սպառնալիքով՝ ընդդէմ Հայաստանի։ Երբեմն յաջողել են։ Կոստանդին կայսրը 630-ական թուականներին զօրքով եկել է Կարին եւ իր հետ հանդիպման գնացած Եզր Փառաժնակերտցի կաթողիկոսին պարտադրել է հայ-յոյն եկեղեցիների միաւորման թուղթ ստորագրել։ Բայց այդ թուղթը միայն մի քանի կաթողիկոսի կեանք է ունեցել։ Իրականում Եզր կաթողիկոսը, վերադառնալով Մայր Էջմիածին, շարունակել է հայկական ծիսակարգով առաջնորդուել։ Այդպէս են վարուել նաեւ նրան յաջորդած կաթողիկոսները։ 607 թուականին հեռանալով Հայոց եկեղեցուց, ընդունելով յունադաւանութիւն, վրաց եկեղեցին եւս անհանդուրժողական դիրքորոշում է որդեգրել Հայոց դաւանանքի դէմ։ Երբ Հայոց Բագրատունիների պետութիւնը ուժեղ է եղել, իսկ Վիրքն էլ Հայոց երկրի մաս է եղել, Հայոց եկեղեցին որեւէ քայլ չի կատարել վրացիներին հայադաւանութիւն պարտադրելու ուղղութեամբ։ Բայց, երբ այլ իրավիճակ է եղել, Հայաստանը 1045 թուականին կորցրել է անկախութիւնը, իսկ Վիրքը ձեռք է բերել անկախութիւն, Վիրքի եկեղեցին անմիջապէս արշաւ է սկսել Հայոց դաւանանքի դէմ։

Սելջուկների դէմ պայքարի քօղի տակ Վիրքի տիրակալները եւս ասպատակել

[42] «Թագակիրների պատմութիւնն ու գովաբանութիւնը» որպէս Զաքարեան Հայաստանի ու Զաքարեանների պատմութեան սկզբնաղբիւր, էջ 420-429:

են Հայաստանի տարբեր շրջաններ եւ տեղաբնիկ հայերին ստիպել լքել իրենց աւերուած բնակավայրերը եւ բռնել աւելի «ապահով» Վիրքի ճանապարհը։ Վիրքի 1089-1125 թուականների Դաւիթ Դ Շինարար թագաւորը 1104 թուականին գրաւել ու սեփականել է Կիւրիկեանների Կախեթի ու Հերեթի Հայոց թագաւորութիւնը, գրաւել է Կիւրիկեանների մայրաքաղաքներ Սշվիլդեն ու Լոռէ բերդը։ Եւ հայերին քշելով Վիրքի խորքերը «... շինեաց քաղաք Հայոց՝ յաշխարհն Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս, և անուանեաց զանուն քաղաքին Գօռա[43]...»[44]։ Այս քայլը նրա հայասիրութեան փաստով միայն չպիտի դիտարկել։ Աւելի շատ պիտի նկատի ունենալ, որ նա այդ քայլով սեփական երկիրը ծաղկեցնող ժողովուրդ է տարել Վիրք։

Հայ ժամանակակից պատմիչները մի կողմից սրտի կսկիծով են նկարագրել օտար՝ մուսուլման կեղեքիչների կողմից Հայաստանի բնիկ տէրերի՝ հայերի կոտորածը, բնակավայրերի աւերը, հրկիզումը, տեղահանութիւնը, հայաթափուած բնակավայրերում օտար տարրերի վերաբնակեցումը եւ բնակչութեան էթնիկական կազմի վատթարացումը, միւս կողմից գովեստի խօսքեր են շռայլել դրացի վրաց տիրակալների հասցէին, որոնք նոյն «ջանասիրութեամբ» աւերել են Հայաստանը՝ իրենց ու թշնամիների միջեւ անմարդաբնակ անվտանգութեան տարածք ստեղծել։ Յաւօք հայ պատմիչները տեսել են միայն իրենց ժամանակը։ Նրանք չէի կարող իմանալ, որ նոյն ու բազմաթիւ մուսուլմանների տիրապետութեան պայմաններում հայերը մնացել են հայ եւ աննըշան է եղել հաւատափոխ հայերի թիւը, բայց նոյն քրիստոնէական դաւանանքի Վրաստանում 15-20 տարուայ ընթացքում հայերը շատ արագ հաւատափոխ են եղել։ Հաւատափոխ են եղել անգամ իշխանները։ Զաքարէ Բ շահնշահի եղբայր Իվանէն, որդին՝ Շահնշահ Ա-ն ու ժառանգները, Ջաւախքի տէր, Զաքարեան Վահրամից սերած Սարգիս Փոքրի ժառանգները ընդունել են քաղկեդոնականութիւն։

Կախեթի հարաւի հայկական թագաւորութեան հայ բնակչութիւնը 1100-ական թուականների կէսերին յայտնուելով Վիրքի տիրապետութեան տակ բացարձակապէս կորցրել է էթնիկ պատկանելութիւնը։ Փաստօրէն Վիրքի տարածքում յայտնուած հայկական տարածքների բնակիչները ստիպողաբար դաւանափոխուել, քաղկեդոնական են դարձուել։

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը[45] ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ

Վերին Խաչէնի Վախտանգ Հաթերքցի թագաւորի պալատում հանգրուանած միջնադարի մեծ մտածող, կրօնագէտ, իրաւագէտ, առակագիր, հայ եկեղեցու դաւանանքի անխոնջ պաշտպան, Հայոց Արեւելեանց կողմի հոգեւոր առաջնորդ Մխիթար Գոշ[46] վարդապետը իր ժամանակիցներից մտքի թռիչքով առաջ է անցել, զգացել, որ պատմական ասպարէզ իջած Զաքարեանները ձգտում են պետութիւն կերտել, 1184 թուականին ձեռնարկել է պետութեան հիմնաքար դատաստանագրքի ստեղծման գործը եւ աւարտել 1193 թուականին, Զաքարէ Բ շահնշահի թագադրութեան նախօրեակին։

Մխիթար Գոշի ստեղծած «Դատաստանագիրք Հայոց»-ը քաղաքացիական եւ եկեղեցական օրէնքների ժողովածու է։ Այն կանոնակարգել է Հայկական նորաստեղծ պետութեան ներքին կեանքը, նպաստել ժաղովրդի վիճակի բարելաւմանը, մարդկանց

---

[43] Այսօրեայ Գորի քաղաքը։

[44] **Մատթէոս Ուռհայեցի**, ժամանակագրութիւն, էջ 390։

[45] **Մխիթար Գոշ**, Գիրք դատաստանի, աշխատասիրութեամբ Խ. Թորոսեանի, Երեւան, 1975։

[46] **Լեւոն Մելիքսեթ Բեկ**, «Վարդապետք Հայոց Հիւսիսային կողմանց» եւ նրանց ինքնութիւնը։ Հայ-վրացական յարաբերութիւններ (պատմագրական հետազօտութեան փորձ)։ Վրացերէնից թարգմանեց Հրաչ Բայրամեանը։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն, 2016, էջ 215-222։

համախմբմանը, կենտրոնաձիգ պետութեան պահպանմանը։ «Դատաստանագիրք Հայոց»-ը հսկայական ազդեցութիւն է ունեցել Մխիթար Գոշի կենդանութիւն օրօք, որպէս ոչ միայն գործադրելի օրէնսգիրք, այլ նաեւ պետութեան սահմանադրական հիմնաւորում՝ փիլիսոփայական յստակ համակարգ, որում արձանագրուել-կանոնակարգուել են թագաւորի, իշխանների, զինուորականների, հոգեւորականների իշխելու, գիւղացիների ապրելու վարքականոնները։ «Դատաստանագիրքը» կարճ ժամանակում կենսական շրջանառութիւն փորձարկում է անցել Հայոց Արեւելեան կողմում՝ Արցախում, ապա ներդրուել Զաքարէ Բ շահնշահի ստեղծած Հայք-Հայաստան պետութիւնում։ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» Զաքարէ Բ շահնշահի ստեղծած անկախ Հայոց պետութեան առաջին եւ կարեւորագոյն հիմնաւորումն էր։ Օրէնսդրական այդ փաստաթուղթը պետական օրգանների աշխատանքային գործիք էր։ Մխիթար Գոշն առաջին օրէնսդիրն էր, որը փորձել է հիմնաւորել հասարակութեան զարգացման իրաւական աստիճանները, վեր հանել ժամանակի շարժիչ ուժերը։ Ձերբազատուելով ժամանակի կրօնական խիստ նախապաշարմունքներից, աշխատել է բացայայտել պատմական իրավիճակների նիւթական հիմքերը, երեւոյթների օրինաչափութիւնները, պատճառահետեւանքային կապերը։ Մխիթար Գոշը գիտակցել է, որ առանց անկախութեան որեւէ ազգ, այդ թւում նաեւ հայերը, որեւէ զարգացում չեն ունենայ։

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՒՄ

Ամուսնութեան ինստիտուտը հազարամեակներ շարունակ եղել է պետականաշինութեան լրջագոյն գործիք։ Ամուսնական կապերի հաստատման ճանապարհով լուծուել են շատ խնդիրներ, կարգաւորուել են պետութիւնների, իշխող ընտանիքների յարաբերութիւնները։ Ամուսնութեան ինստիտուտը լաւագոյնս օգտագործել է 12-րդ դարի հայ խոշորագոյն ռազմական, քաղաքական գործիչ, Հայաստանի 1185-1187 թուականների առաջին թագաւոր, զօրավար, Հայաստանի եւ Վիրքի միացեալ պետութեան առաջին պաշտպանութեան նախարար Սարգիս Բ Մեծը։ Նա իր երկու դուստրերին՝ Դոփին եւ Խորիշահին ամուսնացրել է Խաչէնի երկու ճիւղերի՝ Ծարի գահերեց իշխան Հասան Ծարեցու[47] եւ Ներքին Խաչէնի թագաւոր Վախտանգ Տանգիկի[48] հետ, երրորդ դստերը՝ Նրջիսին, Դսեղի Համազասպեան-Մամիկոնեան տոհմի պայազատի հետ[49], ինչպէս նաեւ եղբօր՝ Վահրամի որդուն՝ Զաքարէ Փոքրին ամուսնացրել է Խաչէնի իշխանատան երկրորդական ճիւղերից Դեսումի որդի Հասան իշխանի դուստր Խաթունի[50] հետ։ Որդիները՝ Զաքարէ Բ շահնշահը, Իվանէ Բ զօրավարը, շարունակելով հօր գործը, իրենց փոքր քրոջը՝ Վանէնի-Նանային, ամուսնացրել են Կիւրիկեան Աբաս Բ թագաւորի[51] հետ, իրենք ամուսնացել են այլ իշխանական տների դուստրերի հետ, ինչպէս նաեւ ամէն կերպ խրախուսել են իրենց ենթակայ իշխանների, նրանց զաւակների ամուսնութիւնը այլ իշխանական տների ներկայացուցիչների հետ։

Պետականութիւն կայացնելու ճանապարհին այս ամուսնութիւններն արդիւնա-

---

[47] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Լուսաբանեալ, էջ 142։ Տե՛ս նաեւ՝ **Ուլուբաբեան Բ. Ա.**, Խաչէնի իշխանութիւնը, էջ 148։ **Կարապետ Եպիսկոպոս**, Նիւթեր հայ մելիքութեան մասին, Բ պրակ, Դոփեանք եւ Մելիք Շահնազարեանք, Ս. Էջմիածին, 1914, էջ 44 եւ յետոյ։

[48] **Ուլուբաբեան Բ. Ա.**, Խաչէնի իշխանութիւնը, էջ 142։

[49] Դիւան հայ վիմագրութեան, պրակ 9, էջ 340, արձանագրութիւն 761, նաեւ՝ էջ 343, արձանագրութիւն 768։

[50] **Ղաֆադարեան Կարո**, Հաղբատ, էջ 202։ Տե՛ս նաեւ՝ **Տիգրան Հայազն**, Տիկնայք փափկասուն Հայոց աշխարհի, կենսագրական հանրագիտարան, գիրք առաջին, Երեւան, 2005, էջ 48-49։

[51] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, էջ 152։ Դիւան հայ վիմագրութեան, Պրակ 6, էջ 135, արձ. 258։ **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմութիւն Կոնդակ սուրբ ուխտին Յօհաննու վանից; Աշխ. Արմէն Վիրաբեանի, Երեւան, հեղինակային հրատարակութիւն, 2015, էջ 189։

ւէտ էին։ Կիւրիկեան թագաւորների կողմից Զաքարեաններին տրուած Խոժոռնի բերդը ու շրջակայ հողերը, Արծրունիներին տրուած Մահկանաբերդը, Կայէն գաւառն ու շրջակայ հողերը, Դսեղի տէրերին պատկանող հողերը, Արցախի իշխանական երեք ճիւղերի՝ Ծարի, Հաթերքի, Խոխանաբերդի տէրերին պատկանող հողերը, ինչպէս նաեւ Կիւրիկեաններին պատկանող Մածնաբերդի եւ Նոր բերդի ու շրջակայ հողերը, ցանցային ամուսնութիւնների ճանապարհով իրար կապելու արդիւնքում, փաստօրէն ստեղծուել է ապագայ պետականութեան հողատարածք, որի վրայ պետութիւն է ստեղծուել։

Այս ամուսնութիւնները ոչ թէ հիմնական բնազդի բաւարարման խնդիր են լուծել, այլ դարձել են քաղաքական ամբողջացման, գաղափարական, մշակութային նոյնականացման հիմք։

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի տնօրէն

ԳՐԱԲԱՐԵԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ

Մի՛ արհամարհեր զծերութիւն մօր քո։

Ամենեւին ի մահուանէ մի՛ երկնչիք։

Եթէ աղաչիցէ զքեզ թշնամին, և ի ձայն բարձր աղերսիցէ, մի՛ հաւատար նմա։

Զբարեկամ քո, և զբարեկամ հայրենի մի՛ թողուր։

Դուք մի՛ քննէք զգործսն իմ։

Մի՛ ուտեր հաց ընդ առն չարական, և մի՛ ցանկանար կերակրոյ նորա։

Յականջս անզգամի ամենևին մի՛ խօսիր, զի մի՛ անգոսնեսցէ զիմաստուն բանս քո։

Եթէ իմաստուն լինիցի սիրտ քո, ուրախ արասցես և զիմ սիրտս։

Լաւ է իմաստուն քան զհզօր, և հանճարեղ՝ քան զայն որ ունիցի դաստակերտս մեծամեծս։